ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2016թ. **N------Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԱՐԾՎԻՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ
ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն ՀՀ վաստակավոր ճարտարապետ Արծվին Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտա հ. 18 հասցեում փակցնելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՐԾՎԻՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ճարտարապետության դոկտոր-պրոֆեսոր Արծվին Գրիգորյանը ծնվել է 1935թ. Թիֆլիսում:

1958թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետական բաժինը:

1965թ. եղել է Երևաննախագիծ ինստիտուտի նախագծերի գլխավոր ճարտարապետը, 1969-1974թթ.՝ Հայաստանի ճարտարապետների միության նախագահի առաջին տեղակալը, 1974-1992թթ.՝ նախագահը, 1982-1986թթ.՝ ՀԽՍՀ պետշինի նախագահի առաջին տեղակալը, 1989-1991թթ.՝ ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր, 1991թ.՝ ԵՊՃՇՀ քաղաքաշինության ամբիոնի վարիչը:

Արծվին Գրիգորյանի կատարած աշխատանքներից են՝ Երևանի Հրազդան գետի հանգստի գոտու գլխավոր հատակագիծը (1960-1962թթ.), Երևանյան լճի համալիրը (1965թ.), Հայաստանի պուրակը՝ ԺՏՆՑ-ում, (1967թ., Մոսկվա), Երևանի կանաչապատման հեռանկարային նախագիծը (1974թ., հեղինակային խմբի նախագահ), Երևանի կենտրոնի հատակագծման և կառուցապատման մրցութային նախագիծը (1974թ., հեղինակային խմբի հետ), Երևանի լանդշաֆտի կազմակերպումը (1977թ.), Փարիզի «Լա Վիլլետ» զբոսայգու մրցութային նախագիծը (1982թ., հեղինակային խմբի հետ), Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 150-ամյակի համալիրի մրցութային նախագիծը (1984թ., հեղինակային խմբի հետ): Գրաֆիկայի և ջրաներկ գեղանկարչության անհատական ցուցահանդեսներով հանդես է եկել Երևանում (1960թ., 1966թ., 1976թ., 2005թ.), Մոսկվայում (1968թ., 1979թ.), Թբիլիսիում (1974թ.), Լենինգրադում (1971թ., 1980թ.), Կիևում (1976թ.), Կիտոյում (1990թ.), Սեուլում (1992թ.), Փարիզում (1994թ.):

Արծվին Գրիգորյանը մի շարք գրքերի, վավերագրական ֆիլմերի սցենարների և ալբոմների հեղինակ է:

1974թ. արժանացել է Համամիութենական մրցույթի 1-ին մրցանակին, 1977թ.՝ Հայաստանի Պետական մրցանակի՝ Երևանի լանդշաֆտի կազմակերպման համար, 1984թ.՝ ԽՍՀՄ ճարտարապետների միության մեդալի:

1979թ. եղել է Վենետիկի Մշակույթի եվրոպական ընկերակցության, 1992թ.՝ Սեուլի Լանդշաֆտային ճարտարապետների միջազգային դաշնության, 1994թ.՝ Ռուսաստանի ճարտարապետության և շինարարության գիտությունների ակադեմիայի արտասահմանյան, 2001թ.՝ Ուկրաինայի ճարտարապետության ակադեմիայի արտասահմանյան և Ճարտարապետության միջազգային ակադեմիայի Մոսկվայի մասնաճյուղի անդամ:

1981թ. նրան շնորհվել է Հայաստանի վաստակավոր ճարտարապետի կոչում:

Արծվին Գրիգորյանը մահացել է 2012թ. Երևանում:

ՀՀ վաստակավոր ճարտարապետ Արծվին Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Սայաթ-Նովայի պողոտա հ.18 հասցեում փակցնելու վերաբերյալ միջնորդություն է ներկայացվել Հայաստանի ճարտարապետների միության նախագահ Մ. Մինասյանի կողմից:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետը՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐԾՎԻՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արծվին Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԱՐԾՎԻՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԸ ՀԱՎԵՐԺԱՑՆՈՂ ՀՈՒՇԱՏԱԽՏԱԿԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Արծվին Գրիգորյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/ կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ